


ԲԱՆՎՈՐԱԿԱՆ  
ԳՐԱԴՐԱՄԱՆ

Համայնք  
430.

ՀՐ. ԳԱԼԻԿՅԱՆ

ԿԱՌԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՊԱՀՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԻ




ՀՐ ԳԱԼԻԿՅԱՆ

331.82

գ

ԱՄՈՒՋԻՄ է 1961 թ.

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՊԱհՏՈԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, - ԵՐԵՎԱՆ, 1930

A 1  
1617

Հ. թ. № 1822:

Գրառեպիար № 5196 (բ):

Տիրաժ 3000:

---

Պետհատի առաջին տպարան վաղարշապատում:  
Գտավիր № 30:

ՀՈՒՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԿԱՆԱՆՑ  
ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց աղատագրության խնդիրը մեկն և այն սուցիալ-քաղաքական հարցերից, վոր իր արմատական լուծումը ստացավ Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ:

Չնայած այն հանգամանքին, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից դեռ շատ տուաջ կանանց աղատագրության խնդիրը դրված ե յեղել հրապարակի վրա և մի շարք քաղաքական կուսակցություններ իրենց ծրագրներում նախատեսել են սոցիալական այդ բարդ հարցի լուծումը, այնուամենայնիվ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նույնիսկ բուրժուական «ղեմոկրատիկ» հանրապետություններում այդ ուղղությամբ ձեռնարկված բոլոր միջոցները յեղել են խարօսիկ, պալիատիվ, անգործնական: Կարելի յէ նույնիսկ վստահությամբ պնդել, վոր Ցեվրոպակում եֆան ժողովրդականություն շահած ֆեմինիստական շարժումն ել չկարողացավ դուրս գալ իր ոպորտյունիստական հետադիմական ելությունից:

Բանվոր զասակարգի համար, հեղափոխական մարքսիզմի մտածողության համար սկզբից ևեթ պարզ յեղել այն իրողությունը՝ թե ընդհանրապես կանանց

և մասնավորապես աշխատավոր կանանց ազատագրության միակ և ուղիղ ճամբան դաստկարգային կովի, պրոլետարական դիկտուրայի ուղին եւ:

Կոմունիստական կուսակցությունը գեռ շատ առաջ սոցիալիստական հեղափոխությունից իր ծրագրում նախատեսել եր, վոր պրոլետարիատի ազատագրական կովի հաջողությունը պայմանավորված ե բանվորների ու բանվորուհիների միասնական-դաստկարգային պայքարով, վոր կին աշխատավորության (բանվորուհիների և գեղջկուհիների) ազատագրությունը կարող ե իրականանալ պրոլետարիատի դիկտուրայի ժամանակ միայն, վոր, հետեւսբար, յերկու սեռի աշխատավորները ձեռք-ձեռքի տված միասնական գրոհով պետք ե խորտակեն բուրժուա-կապիտալիստական իրավակարգը, նրա ավերակների վրա սոցիալիստական հասարակակարգ կառուցելու համար:

Նախկին ցարական Ռուսաստանում, մինչ-հոկտեմբերյան հեղափոխական շարժման մեջ, հատկապես 1905 թվի հեղափոխությունից հետո աշխատավոր կինն իր պատվավոր տեղն ե ունեցել:

Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչ միայն արմատապես և լիովին լուծեց կանանց ազատագրության պրոբլեմը, այլ միաժամանակ մասսայական պայքարի և գործունեյության ասպարիզում կանանց մասնակցության խնդիրը դրեց լայն շրջանակում:

Բնկ. Լենինը Հոկտեմբերյան հեղափոխության գնահատականը տալիս հատկապես նշել ե, վոր, «Հոկտեմբերյան հեղափոխությունը բանվորների և գլուղացիցիների հեղափոխությունն եւ այդ պատճառով ե, վոր

նա կարողացավ ամբողջովին և վերջնականապես աղա-  
տագրել աշխատավոր կանանց»:

«Բայլշեիզմի ու Հոկտեմբերյան հեղափոխության մեջ  
դիմավորը, հիմնականն, ասում ե նա մի այլ առիթով,  
այն ե, վոր քաղաքականության մեջ ներգրավվեցին  
հատկապես նրանք՝ ովքեր կապիտալիզմի որոք ամե-  
նից ավելի լին կեղեքված լիղել...»:

Վոչ վոքի համար գաղտնիք չե այժմ, վոր կապիտա-  
լիստական յերկրներում կինը շարունակում ե մնալ  
ստորագաս, ստրկական դրության մեջ, միաժամանակ  
հեծելով լիրկու տարբեր լծի տակ—տնտեսական և ըն-  
տանեկան։ Ծնտեսական ստրկությունը՝ միացած ըն-  
տանեկան գերության հետ, ավելի ևս ծանրացնում են  
հատկապես աշխատավոր կանանց խնդրի լուծումը։

Ահա կրկնակի այդ լուծն ե, վոր վերջնականապես խոր-  
տակեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, տալով աշ-  
խատավոր կանանց—բանվորուհիներին և գեղջկուհի-  
ներին—լիակատար իրավահավասարություն, ինչպես  
քաղաքական, նույնպես և տնտեսական ու քաղաքա-  
ցիական իրավունքների բնագավառներում։

Խորհրդային բոլոր հանրապետությունների հիմնական  
որենքը (Սահմանադրությունը) նախատեսնում ե, վոր  
խորհուրդներում ընտրելու և ընտրվելու իրավունքը  
վայելում են բոլոր աշխատավորներն առանց ցեղի,  
աղքության և սեռի խտրության—այլ խոսքով՝ քաղա-  
քական իրավունքների տեսակետից տղամարդ և կին  
աշխատավորներն իրավահավասար են։ Հետևաբար աշ-  
խատավոր կինն ել կարող ե ընտրվել խորհուրդներում,  
սկսած նրա սկզբնական բջիջից—գյուղխորհրդից մին-  
չև խորհուրդների ամենաբարձր որդանը՝ ԽՍՀՄ կենտ-  
րոնական Գործադիր կոմիտեն։

Դարձլալ Հոկտեմբերյան հեղափոխությունն եր, վոր յուծեց կնոջ տնտեսական ազատագրության խնդիրը, այն իմաստով, վոր հավասար աշխատանքի համար կինն ստանում ե նույն վարձատրությունը, ինչ վոր տղամարդը, մինչդեռ անխտիր բոլոր կապիտալիստական յերկրներում կնոջ աշխատանքն անհամեմատ քիչ ե վարձատրվում, նույնիսկ այն դեպքում, յերր արտ աշխատանքն իր արտադրողականությամբ ու ոգտավետությամբ կապիտալիստի համար յետ չի մնում տղամարդ աշխատավորի աշխատանքից: Եժան ձեռներ վորոնող կապիտալիստը հավելլալ արժեք գուրս քաշելու, կապիտալ կուտակելու, գործնական միջոցներից մեկն ել համարում ե կանանց, այլև անչափահասների վարձու աշխատանքը:

Աշխատանքի վարձատրության մեջ յեղած այս անհավասարությունը կա և շարունակվում ե վոչ միայն ֆիզիկական, այլև մտավորական աշխատավորների համար Յեվրոպակալում և Ամերիկայում:

Կին բժիշկը, կին ուսուցիչը, կին ծառայողն այնտեղ նվազ ե գնահատվում, քան նույն մասնագիտությունը, նույն վորակն ունեցող տղամարդը:

Կանանց աշխատանքի պաշտպանությունը, մանկության և մայրության պաշտպանությունը միայն պրոլետարիատի դիկտատուրայի որոք, միայն խորհրդավոր իրավակարգություն ե դրված ամուր, անսասան հիմքերի վրա:

Դարձլալ Հոկտեմբերյան հեղափոխությունն ե, վոր կարողացավ կնոջն ազատագրել նաև ընտանեկան ստըրկությունից, ապահովել կնոջ լիակատար ու հավասար իրավունքը՝ յերեխաների խնամատարության ու դատիարակության խնդիրներում:

Սոցիալիստական հեղափոխության շնորհիվ ե, վոր  
կինը, անկախ իր ամուսնուց, սեփական հայեցողու-  
թյամբ կարող ե տնորինել իր քաղաքացիական կյան-  
քը, կարող ե ուզած պայմանագրային հարաբերություն-  
ների մեջ մտնել, իրավունքներ ձեռք բերել, պարտա-  
վորություններ ստանձնել, տնորինել իր տնտեսական  
գործերը, ապրել ուզած վայրում, զբաղվել նախընտ-  
րած արհեստով ու մասնագիտությամբ, ցանկացած  
բոպելին խզել իր ամուսնական կապը, փոխել իր աղ-  
գանունը —մի խոսքով՝ իր առորյա կյանքում ազատ-  
վել ամուսնական խնամակալությունից, նրա տնտե-  
սական գերությունից ու ազատորեն նվիրվել հասա-  
րակական աշխատանքի, լծվել խորհրդային շինարա-  
րության, իր ուժերը նվիրել սոցիալիզմի կառուցման։

Հոկտեմբերյան հեղափոխության, Կոմունիստական  
կուսակցության համար կանաց ազատազրության  
ընդհանուր պրոբլեմում խիստ կարևոր ու առանձնա-  
հատուկ տեղ ե գրավում արևելքի կանաց ազատա-  
գրության խնդիրը։

Կենցաղային ամենայետամաց պայմաններում, կրո-  
նական և բարոյականության նախապաշարումների ու  
սնութիապաշտության ամենահեղձուցիչ մթնոլորտում  
ու կուտուրական յետամացության սկզբնական մա-  
կարդակի վրա գտնվող արևելյան, հատկապես մու-  
սուլման կնոջ ազատագրությունը շատ ավելի համառ  
ու հարատե ճիգ եր պահանջում, շատ ավելի ներգոր-  
ծող ու կտրուկ միջոցների անհրաժեշտությունն եր  
առաջադրում։

Ազատագրել արևելքի կնոջը բազմակնության ստըր-  
կացուցիչ դրությունից, ազատել նրան առուծախսի,

նվերի, վրիժառության ու առևանգման սովորական որյեկտ լինելուց, աղատել նրան դուրանի և նման կրոնական դոգմաների թուլնից, դուրս հանել նրան հարեմի անթափանց պարիսպներից ու մասնակից անել կուլտուրական-տնտեսական և քաղաքական կյանքին, բնականաբար, կուսակցությունից և իշխանությունից պիտի խլեր մեծագույն լարված եներգիա, նյութական և բարոյական հսկայական միջոցներ:

Կոմկուսակցությունն ու Խորհրդավիճակին իշխանությունը կանգ չառան վորեե զոհաբերության առաջ՝ կանանց աղատագրության ու իրավահավասարության խնդրին ամբողջական և լիակատար լուծում ապահովելու համար:

Ընկ. Լենինը աշխատավոր կանանց ճակատագրին նվիրած իր մի շարք լելութներում ու գրվածքներում ընդգծել ե, վոր... «Բուրժուական դեմոկրատիան դարերի ընթացքում հոչակեց մարդկանց հավասարություն, առանց ցեղի, կրոնի, սեռի ու ազգության խտրության, բայց կապիտալիզմը գործնականում վոչ մի ժամանակ չիրականացրեց այդ հավասարությունը»: Միայն դրա համար, վոր Խորհրդավիճակին իշխանությունը աշխատավորության իշխանություն ե, կարողացավ մինչն վերջը և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար չափով իրականացնել այդ իրավահավասարությունը, ամբողջովին վերացնելով կանանց անհավասարության վերջին մնացորդները...»:

ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՑԵՎ  
ԿՈՂՊԵՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Վորպեսպի աշխատավոր կինը կարողանա լիովին ոգտվել այն իրավահավասարությունից, վոր Հոկտեմ-

բերյան հեղափոխությունը բերեց նրան, անհրաժեշտորեն նա ամենաակտիվ մասնակցություն ցույց պետք է տա, ինչպես խորհրդալին, նույնպես և հասարակական, հատկապես պրոֆեսիոնալ ու կոռպերատիվ որդանների ու կազմակերպությունների աշխատանքներին:

Խորհրդալին իշխանությունը չի բավականանում միայն սահմանադրությամբ հռչակելով կնոջ քաղաքական իրավահավասարությունը, այլ նաև գործնականում ապահովելու համար կնոջ լայն մասնակցությունը խորհուրդներում՝ ամեն միջոց ձեռք և առնում կին աշխատավորներին, հատկապես գիտակից ու ակտիվ բանվորուհիներին, ու գեղջկուհիներին ներգրավելու խորհուրդների և նրանց գործադիր կոմիտեների աշխատանքներում։ Այս նպատակով խորհրդալին բոլոր հանրապետություններում հրատարակված են մի շարք վորոշումներ, վորոնցով հանձնարարվում ե բանվորուհիներին ու գեղջկուհիներին մասնակից դարձնել խորհրդալին և տնտեսական որդանների գործունելության։ Ապահովելու համար խորհրդալին հիմնարկությունների սերտ կազմ աշխատավորության լայն մասսաների հետ, թարմացնելու և ճկունացնելու համար խորհրդալին ապարատը նրան բրուրոկրատական տարրերից և յերեվույթներից ազատելու նպատակով անհրաժեշտ և համարվում, վոր կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները հատուկ ուշադրություն դարձնեն նաև կին աշխատավորներին առաջ քաշելու վրա, վոչ միայն խորհրդալին, այլ և տնտեսական հիմնարկություններում, պրոֆեսիոնալ և կոռպերատիվ կազմակերպություններում, ինչպես տեխնիկական, նույնպես և պատասխանատու աշխատանքների համար։

Դեռևս 1924 թ. ԽՍՀ Միության կենտրոնական գործադիր կոմիտեն բոլոր խորհրդավին հանրապետությունների կենտրոնակոմիներին ուղղած իր շրջարերականով հանձնարարել և շտապ միջոցներ ձեռք առնել խորհուրդների անդամ բանվորուհիներին ու գեղջկուհիներին կապել այլազան գործնական աշխատանքների ու հանձնարարությունների հետ:

Խորհրդավին ապարատի ճկունացման և բարվոքման վորպես ամենագործնական միջոց, ԽՍՀ Միության խորհուրդների Յ-րդ համագումարը համարեց խորհրդավին պետության և շինարարության բոլոր որդաններում և բնագավառներում բանվորության և գյուղացիական լայն մասսաների ընդգրկումը: Այս հարցի գործնական լուծման ընթացքում տեղական որդանների վրա պարտականություն դրվեց հատուկ ուշադրություն դարձնել գեղջկուհիների և բանվորուհիների լայն ոգտագործման վրա:

Յելնելով հիշյալ հիմնական դիրեկտիվից, աշխատավոր կանանց ամենագործոն մասնակցությունը պետք է ապահովի հատկապես մասսայական որդաններում, որինակ, հողալին որդաններում, ժողովրդական լուսավորության ու առողջապահության մարմիններում, ժողովատարաններում առանձնապես, վորպես ժողովատենակալներ և առհասարակ բոլոր այն որդաններում և կազմակերպություններում, վորոնք զբաղվում են աշխատավորության կենցաղավին խնդիրներով, մանկության և մայրության պաշտպանության խնդիրներով:

Զնալած այն նվաճումներին, վոր աշխատավոր կինը հատկապես վերջին տարիների ընթացքում ձեռք ե բերել խորհրդավին շինարարության բոլոր ֆրոնտներում:

դեռևս շատ անելիքներ կան, մինչև վոր իրականություն դառնա ընկ. Աենինի այն պատգամը, թե «յուրաքանչյուր խոհարարուհի պետք ե սովորի պետություն կառավարելը»:

Ներկա պատմաշրջանում, յերբ սոցիալիստական տընտեսությունն իր հաղթական նվաճումների ընթացքում վոչչացնում ե մեր յերկրում գեռ գոլություն ունեցող կապիտալիստական տնտեսության ելեմենտները, յերբ խորհրդային ու կոլխկտիվ տնտեսությունների միջոցով գյուղացիական տնտեսությունը մտնում է պետական պլանային տնտեսության սեկտորի մեջ, սոցիալիզմի կառուցման գործի հաջողության արագ տեմպը հրամայականորեն պահանջում է, վոր մեր յերկրի միլիոնավոր աշխատավոր կանայք ամենագործոն մասնակցություն ցուց տան խորհրդային շինարարության բոլոր աշխատանքներին, ուժեղացնեն իրենց ակտիվությունը քաղաքական, տնտեսական և կուլտուրական բոլոր ասպարեզներում. հատուկ ուշադրության արժանացնեն այն աշխատանքները, վոր պրոֆեսիոնալ կազմակերպությունները պետք ե կատարեն կին աշխատավորության մեջ:

Այս տեսակետից ուշագրավ ե այն բանաձեռ, վոր համամիութենական պրոֆեսիոնալ կազմակերպությունների 6-րդ համագումարն ընդունեց:

«Պրոֆեսիոնալ ամեն տեսակ պաշտոններում կին աշխատավորների առաջ քաշումը մինչև այժմ սահմանափակված է յեղելգլխավորաբարնընտնում, վոր կանայք առաջ են քաշվել միայն պրոֆմիութենական ստորին աղաքատներում, հատկապես այնտեղ, վորտեղ ամենից ավելի կարիք ե լինում շփում ունենալու կանանց բան-

վորական մասսաների մեջ։ Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր աշխատավորուհիներն առաջ քաշվեն նաև պատասխանատու աշխատանքների համար, պրոֆեսիոնալ բոլոր որդաններում, սկսած ֆաբզավկոմներից մինչև միութենական ամենաբարձր որդանները»։

Բացի այդ, ի նկատի ունենալով կանանց լիակատար ազատագրությունը, լերեխաների կլանքի ու առողջության լիակատար պաշտպանությունը, նաև կանանց աշխատանքն արդյունաբերության մեջ ավելի ոգտավետ դարձնելու նախանձախնդրությունը, անհրաժեշտ ե համարում զգալապես ընդլայնել մանկական մսուրների և հասարակական ճաշարանների ցանցը։ Պրոֆմիութենական որդանները պարտավոր են հավաքական պայմանագիր կնքելիս միջոցներ ձեռք առնելով ու անտեսական որդանները բանվորների կենցաղը բարելավելու ոգտին բավարար հատկացումներ անեն։

Նվազ ուշադրության արժանի չեն նաև կանանց մեջ տարվելիք կուլտ-կրթական աշխատանքները։

Կին աշխատավորների, հատկապես բանվորուհիների կուլտուրական մակարդակը բարձրացնելու նպատակով նրանց պետքեներգրավել կլուբներում, կրուժոկներում, անգրագիտությունը վերացնող լիկէայաններում, ուղարկել նրանց բանֆակներ ու համալսարաններ, պրոֆկուրսեր և դպրոցներ, մատցնել նրանց շեֆ-կոմիսիաներում, մասնակից դարձնել պատի լրագրների աշխատանքներին, բանգլուղթղթակիցների կրուժոկներին, մի խոսքով՝ մղել նրանց ինքնագործունելության ու հասարակական ակտիվության։

Անհրաժեշտ ե նաև կլուբների գրադարաններում ունենալ կանանց շարժման վերաբերյալ լայն գրականու-

թիուն։ Հատուկ ուշադրություն պետք եղարձնել, վորպեսզի լեկցիաների, զեկուցումների, դիսկուսիաների ընթացքում շոշափվեն նաև կին աշխատավորների կենցաղին վերաբերող զանազան հարցեր։

Կուսակցական և պրոֆեսիոնալ դիրեկտիվ որգանները ժամանակի ընթացքում հատուկ ուշադրություն են դարձրել նաև կոռպերատիվ կազմակերպությունների աշխատավոր կանանց մեջ տանելիք հերթական աշխատանքների վրա։

Նպատակ ունենալով կանանց աղատել տնային հոգաբերից և հնարավորություն տալ նրանց նվիրվելու հասարակական ոգտավետ գործունելության, կոռպերատիվ կազմակերպությունները պետք եղանակական աշխատել կոլեկտիվ կենցաղի հարմարություններ. այն եկազմակերպել բանվորական լավ ճաշարաններ, հատուկ ուշադրություն դարձնելով կուլտուր-լուսավորական աշխատանքների վրա, ստեղծել կոռպերատիվ լվացարաններ, կազմակերպել մայրերի և յերեխաների անկյուններ, մանկական հրապարակներ, մանկական պարտեզներ ու մսուրներ, կոնսուլտացիաներ։ Անհրաժեշտ ե միաժամանակ կոռպերատիվ կազմակերպություններում առաջ քաշել հատկապես նրանց, ովքեր ամենից ավելի շահագրգուված են վերոհիշյալ տիպի կազմակերպությունների զարգացմամբ և բարգավաճմամբ, այն ե՝ կին աշխատավորներին։

Վերոհիշյալ բոլոր բնագավառներում զգալի նվաճումներ արդեն կան։ Բայց դեռ շատ են բացերը՝ թե կազմակերպչական և թե կուլտ-կրթական տեսակետից։ Այդ բացերի շուտափությունը վերացման համար ամենալեռնադրուն աշխատանքի պետք ե լծվեն առաջին հերթին

իրենք՝ աշխատավոր կանայք — բանվորուհիներն ու գեղջիկները, հավաքական չտփերով ու կամքով գոլություն ունեցող դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելու համար:

Բայց վորպեսզի կին աշխատավորը լիովին գիտակցի իրեն վերապահված հասարակական մեծ դերը, վորպեսզի նա ոգտվի իրեն վերապահված իրավունքներից, անհրաժեշտ ե, վոր կանանց իրավաբանական ոգնություն ցուցը տալու գործը գրվի բավարար հիմքերի վրա:

Դործող որենսդրությամբ բավարար չափով ապահովված են կանանց շահերը, բայց շնորհիվ այն հանգամանքի, վոր աշխատավոր կանանց ամենալայն մասսաները դեռ իրազեկ չեն գործող որենսդրության ըստ կամ ժամանակին չեն ոգտվում իրենց վերապահված իրավունքներից, հաճախ խիստ տուժում են կանանց ամենակենսական շահերը:

Խուսափելու համար նման դրությունից, խորհրդացին իշխանությունն առանց ուշադրության չի թողնում նաև կանանց իրավաբանական ոգնության գործը:

Ընդհանրապես աշխատավորական մասսաների և հատկապես աշխատավոր կանանց իրավաբանական ոգնության գործին պետք ե լծվեն վոչ միայն պրոֆեսիոնալ կազմակերպությունները, վոչ միայն աշխատավորության մեջ աշխատող մի շարք հասարակական կազմակերպությունները, այլ հատկապես նաև դատական որգանները, դատական գործիչները, դատապաշտապանները, իրավաբանական բյուրոնները, աշխատանքի տեսուչները և այլն:

Վոչ միայն իրավաբանական ոգնություն, այդ ընդհանրապես խորհրդալին իրավունքի և որենսդրության

մասսայականացման, մասնավորաբար կանանց և յերեխաների շտհերի պաշտպանության վերաբերյալ որենքների և վորոշումների ժողովրդականացման խնդրում մեծ դեր ու պարտականություն ունեն արտադրության որդաններն ու գործիչները:

Այս ուղղությամբ կատարվող աշխատանքների բարեհաջող ընթացքը մեծապես կնպաստի կին աշխատավորների քաղաքական ու հասարակական ակտիվության և հետեաբար մեծապես կրաքրացնի նրանց մասնակցության չափն ու կշիռը մեր յերկրի քաղաքական, տնտեսական և կուլտուրական աշխատանքների բոլոր բնագավառներում:

## ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ա. Աշխատանքային պարհակը յել կանալք

Հակառակ ուազմական կոմունիզմի ժամանակաշրջանում գոլություն ունեցող ընդհանուր պարտադիր աշխատանքային պարհակին, նեպից հետո բոլոր խորհրդային հանրապետություններում աշխատանքային պարհակը գործ ե դրվում վորպես բացառություն, ժողկոմխորհի հատուկ վորոշման և լիազորության հիման վրա:

Աշխատանքային պարհակը վարձու աշխատանք չե և, հետեաբար, նման աշխատանքի վրա ընդհանուր առմամբ չեն տարածվում վարձու աշխատանքը կարգավորող որենքներն ու վորոշումները: Այնուամենայնիվ, Աշխատանքի Պաշտպանության Խորհրդին և Աշխատավորմատին իրավունք ե վերապահնված աշխատանքային պարհակի կարգով կատարված աշխատանքների վրա

տարածել Աշխատանքալին Որենսգրքի այս կամ այն  
հոդվածի ներգործությունը:

Ընդհանուր առմամբ՝ վոչ վոքի չի կարելի հարկադրել  
աշխատելու հետևաբար, միայն կամավոր վարձակալալու-  
թյան կարգով կարելի լե վորեւ մեկին աշխատանքի  
հրավիրելու կան սակայն բացառիկ դեպքեր, յերբ պե-  
տական և հասարակական կենսաշահերը պահանջում  
են այս ընդհանուր կարգից ժամանակավոր շեղում կա-  
տարելու Ահա նման դեպքերում աշխատանքը դառնում  
ե պարտադիր, կամավոր աշխատանքը պարհակի չե  
մերածվում: Համաձայն Աշխատանքալին Որենսգրքի՝  
աշխատանքալին պարհակը թույլ ե արվում միայն այն  
ժամանակ, յերբ անհրաժեշտ ե՝ ա) կովել տարերային  
աղետների դեմ, բ) յերբ դա անհրաժեշտ ե պետության  
համար կարեռագույն նշանակություն ունեցող աշ-  
խատանքների շուտափույթ կատարման համար:

Այսպես, բանվորական ուժի պարտադիր ոգտագոր-  
ծումը թույլ ե արվում հետեւյալ աշխատանքների հա-  
մար.—յերկաթուղագիծը ծածկող ձյան հյուսերի դեմ  
կովելու, անտառային հրդեհները մարելու, քաղաքնե-  
րում և գյուղական վայրերում պատահած հրդեհները  
մարելու, յեթե բավարար չափով հրդեհաշեջ խմբեր  
չկան, վողողութիւնների ժամանակ, գարնանային հորդա-  
ցող ջրի հոսանքից յերկաթուղային կամուրջները պաշտ-  
պանելու համար, յերկաթուղային մանր աղետների  
(խորտակում, պայթյուն և ալին), համաճարակների դեմ  
կովելու ժամանակ, յերբ անհրաժեշտ ե ազգարնակու-  
թյան աջակցությունը մնասատուների դեմ (որինակ,  
մորեխների հարձակման) կովելու դեպքում, զորաշար-  
ժի ժամանակ, խոտի և այլ մթերքների փոխադրու-  
թյան ժամանակ և այլն:

Բոլոր վերոհիշյալ դեպքերում կարելի յե պարտադրել,  
վոր աշխատանքալին պարհակի կանչվողներն իրենց  
հետ բերեն նաև իրենց ունեցած փոխադրական միջոց-  
ները:

Չնայած այն հանգամանքին, վոր աշխատանքալին  
պարհակը տեղի յե ունենում արտակարգ պարագանե-  
ռում, այնուամենալինիվ այդ պարհակի պարտավորու-  
թյունը չի տարածվում ըոլոր քաղաքացիների վրա:

Համաձայն զործող աշխատանքալին որենսդրության,  
ստորև հիշատակված կատեգորիաների քաղաքացիներն  
աղատ են աշխատանքալին պարհակից:

1. Տարիքի պատճառով աղատվում են պարհակից.  
ա) 18 տարին չըրացրածները, բ) 45-ից բարձր տարիք  
ունեցող տղամարդիկ և գ) 40-ից բարձր տարիք ունե-  
ցող կանայք:

2. Առողջական դրության և ընտանեկան գրության  
պատճառով պարհակից աղատվում են՝ ա) հիվանդու-  
թյան կամ անձին հասցրած վնասի հետևանքով իրենց  
աշխատունակությունը ժամանակավորապես կորցնող-  
ները, բ) հղի կանայք՝ նախքան ծննդաբերության որը՝  
8 շաբաթվա ընթացքում և ծննդկան կանայք ծննդաբե-  
րությունից հետո ուժ շաբաթվա ժամանակաշրջանում.  
գ) ստինքով թիւեցնող կանայք, դ) աշխատանքի և  
պատերազմի անկարները և ե) մինչև 8 տարեկան յերե-  
խա ունեցող կանայք, յեթե նրանք տնձնապես պար-  
տավորված են ինամել յերեխաներին:

Խորհրդային իշխանությունը աշխատանքալին պար-  
հակի խնդրում վորոշ կատեգորիայի կանանց վերա-  
պահելով վերոհիշյալ արտօնությունները, նպատակ  
ունի պաշտպանութեան մանկության և մայրության առող-  
ջությունը:

բ. Պրոֆեսիոնալ աշխատանքներ յել կանանց  
առողջությունը

Կանալք շնորհիվ իրենց բնախոսական լուրահատուկ պայմանների սովորաբար նվազ դիմացկուն են և նվազ ընդունակ արագ և ծանր աշխատանքներ կատարելու Խորհրդային հանրապետություններում կատարված հաշվառումը գալիս և հաստատելու, վոր վորոշ կարգի ֆաս սարեր աշխատանքներ ամենածանր կերպով են անդրադառնում կին աշխատավորների Փիզիկական դրության վրա, քայլքայում են նրանց առողջությունը։ Համաձայն ստատիստիկական տվյալների (որինակ, Խորհրդային Ռուսաստանում) կին բանվորների հիվանդության տոկոսը տղամարդկանց տոկոսից  $20-40\%$ -ով բարձր են կին աշխատավորը հատկապես մեծ տոկոս ե տալիս ստամոքսային և ներվալին հիվանդությունների։ Հաշվառումը միաժամանակ ապացուցում ե, վոր գործարաններում և դաշտում աշխատող կանալք հիմնարկություններում աշխատող կանանց հետ համեմատած՝ 2 և կես անգամ ավելի յեն հիվանդանում։

Վերոհիշյալ փաստական դրությունները հրամայականորեն առաջադրում են աշխատանքի ինքնուրուցն պայմաններ ապահովել կին աշխատավորների համար։ Իշխանությունը բնականաբար պետք ե մտահոգվի նրանով, վոր մեկ կողմից ավելի մեծ թվով կանալք կապվեն մեր արդյունաբերության հետ, իսկ մյուս կողմից ել՝ կանանց աշխատանքի համար ըստ հնարավորության ստեղծվեն նպաստավոր պայմաններ։

Կանանց աշխատանքի համար որենսողությանը սահմանված են հետեւյալ կանոնները.

Կանանց աշխատանքն արգելված է. — ա) հատկապես ծանր և առողջության համար մնասակար ձեռնարկություններում, բ) ստորերկրյա աշխատանքներում:

Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատին իրավունք է վերապահված համաձայնության գալով պրոֆեսիոնալ կազմակերպությունների Համամիութենական կենտրոնական Խորհրդի հետ, վորոշել այն աշխատանքները, վոր արգելվում է կատարել կանանց: Այսուղղությամբ հատուկ վորոշումներ են հրատարակված 1921 թ. և հետագայում ԽՍՀ Միության Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի և ժողովրդական Ծնուեսության Բարձրագույն Խորհրդի միացյալ վորոշումով: Նրանց ներգործությունը տարածված է ամբողջ Միության տերրիտորիայի վրա:

Այս ընդհանուր կանոնից միայն բացառիկ դեպքերում թույլ է տրվում շեղվել, այն ել այն դեպքերում միայն, յերբ արտադրության տեղական պայմաններում հնարավոր է դառնում կիրառել կանանց աշխատանքը, և դա առանձին հանրապետությունների Աշխատողկոմատի հատուկ վորոշման հիման վրա:

Ինչ վերաբերում է ֆիզիկական ծանր աշխատանքներին, կանանց վերաբերյալ արգելվը սահմանվում է տնտեսական որդանների և պրոֆեսիոնալ կերպությունների կնքած հատուկ համաձայնություններով, վորոնք անպայման պետք է հաստատվեն Աշխատանքի Տեսչության կողմից:

Բոլոր այն դեպքերում, յերբ հատկապես մնասակար արտադրությունների մեջ վորպես բացառություն թույլ է տրվում կանանց աշխատանքը՝ կանխելու համար հավանական վտանգները, անհրաժեշտորեն բանվորուելի-

ները պետք ե լենթարկվեն նախնական բժշկական քննության և բացի ալդ, աշխատանքների ընթացքում ևս պարբերաբար բժշկական քննության լենթարկվեն:

Միաժամանակ պաշտպանելու համար աշխատավոր-ների առողջությունը խիստ տաք, խոնավ կամ կեղ-տոտ վայրերում և պայմաններում, նրանց պետք ե տրվեն համապատասխան արտհագուստ (ակնոց, դի-մակ, շնչափող և այլն)՝ կանանց համար հատկապես հարմարեցրած իրենց սեռին:

Գալով գիշերային աշխատանքներին, պետք ե նկա-տել, վոր ընդհանուր առմամբ նման աշխատանքներն արգելված են կանանց համար: Բայց դարձլար, վորպես բացառություն, թույլ ե տրվում կանանց գիշերային աշխատանքներն արտադրության այն բնագավառնե-րում, վորտեղ կանանց աշխատելն անհրաժեշտ ե հա-մարվում: Հասուն կանանց համար վորոշ կարգի գի-շերային աշխատանքների ցուցակը սահմանում ե Աշխ-ժողկոմատը՝ պըոֆեսիոնալ կազմակերպությունների կենտրոնական խորհրդի համաձայնությամբ:

Պետք ե ընդգծել, վոր հակառակ կանանց գիշերային աշխատանքների սկզբնական ընդհանուր արգելքին, հետագայում, հաշվի առնելով կանանց մասսալական անգործությունը մեկ կողմից, արդյունաբերությունից աստիճանաբար կանանց հեռացնելու փաստը մյուս կող-մից, անհրաժեշտ համարվեց թույլատրել, վոր գիշերա-յին աշխատանքները կատարեն նաև կանալք, բացա-ռությամբ արդյունաբերության վորոշ ճյուղերի, վոր-տեղ կանանց աշխատանքը բացարձակապես պետք ե արգելվի: Համաձայն կենտրոնից տրված հրահանդի, առանձնապես հանրապետությունների աշխժողկոմատ-

ներն իրավունք ունեն համապատասխան պրոֆկադ-  
մակերպության հետ միասին վորոշել արդյունաբերու-  
թյան այն ձևուղերը, վորտեղ կանանց գիշերային աշ-  
խատանքները միանգամայն արգելվում են:

Ավելորդ չի հիշեցնել, վոր անկախ աշխատանքի-  
քնութից, գիշերային աշխատանքները բացարձակա-  
պես արգելվում են հղի, այլև ստինքով թիեցնող  
կանանց համար: Այսպիսի կանանց աշխատանքը պետք  
է անպայման փոխազրվի ցերեկ և նման հնարավորու-  
թյան բացակալության դեպքում նմանները պետք ե  
տեղափորվեն տվյալ ձեռնարկության կամ հիմնարկու-  
թյան այն բաժանմունքներում, վորտեղ կան ցերեկա-  
յին համապատասխան աշխատանքներ:

#### գ. Հղի կանանց արտօնությունները

Կապիտալիստական բոլոր լերկրներում կին աշխա-  
տավորների մեծամասնությունը հնարավորություն չու-  
նի թողնելու իր աշխատանքը մինչեւ ծննդաբերու-  
թյան նախորյակը: Հղի կանայք կամ բնավ արձակուրդ  
չեն ստանում կամ լեթե ստանում են ել՝ այնքան կար-  
ճատե, վոր միանգամայն անբավարար և նորմալ  
ծննդաբերությունն ապահովելու համար:

Մյուս կողմից մոռացության չպետք ե տալ այն  
հանգամանքը, վոր աշխատանքի այն ծանր պայման-  
ները, վորոնց մեջ հարկադրված ե աշխատել կինը՝  
կապիտալիստական լերկրներում, ամենավատ կերպով  
ե անդրադառնում հղի կանանց առողջության և  
ծննդաբերության դրության վրա, առաջ բերելով մայ-  
րերի վաղաժամ ծերացում, անժամանակ ծնունդ, ան-  
կարություն և այլն: Դրա հետևանքով հյուծվում ե նաև

նոր սերունդը՝ մայրական արգանդից սեռած, և մենք  
տկանատես ենք լինում վատառողջ, արնապակաս ու  
տխեղծ մի սերունդի:

Խորհրդային իշխանությունը՝ վորը կոչված և մտա-  
ծելու առհասարակ բոլոր աշխատավորների և հատկա-  
պես կին աշխատավորների առողջության մասին, իր  
մի շարք որենսդրական վորոշումներով միջոցներ և ձեռք  
առել ինչպես մայրության, նույնպես և մանկության  
պաշտպանության համար:

Այդ և պատճառը, վոր որենքով արգելված և զիշե-  
րային աշխատանքներում հղի կտնանց աշխատանքը,  
ինչպես արգելված և նաև նմանների արտաժամյա աշ-  
խատանքը, միենուկն արգելքը կա նաև ստնտու կա-  
նանց համար: Վերջինները, բացի ընդհանուր դադար-  
ներից, բանվորական որվա ընթացքում ևս ստանում  
են լրացուցիչ դադար, վորպեսզի կերակրեն իրենց  
լերեխաններին: Նման դադար տեղի պետք ե ունենան  
Յ և կես ժամը մեկ անգամ և վոչ պակաս, քան կես  
ժամ: Բնականաբար այս դադարը հաշվում ե բանվո-  
րական որվա մեջ և վճարվում ե ընդհանուր կարգով:

Աշխատանքի տեսուչների վրա հատուկ պարտակա-  
նություն ե դրվում հսկել, վորպեսզի հղի կանալք  
ծանր աշխատանքների չլծվեն և նրանք իրավունք  
ունեն հղիության ժամանակաշրջանում կին աշխատա-  
վորներին տեղափոխելնույն ձեռնարկության կամ հիմ-  
նարկության մեջ ավելի թեթև աշխատանքի:

Սկսած հղիության հինգերորդ ամսից կին աշխա-  
տավորներն, առանց նրանց համաձայնության, չպետք  
ե գործուղվեն իրենց մնացած աշխատավայրից գույք:  
Իսկ համաձայնությունը հարգելի լի համարվում ալն

դեպքում, յերբ ճամբորդությունը յուր փոխադրական միջոցների և ալլնի տեսակետից չի վտանգում աշխատավորուհու առողջական դրությունը:

Հղիության և ծննդաբերության պատճառով կին աշխատավորներն ստանում են յերկարատև տրձակուրդ, պահելով անշուշտ իրենց աշխատավարձը, վորպիսին նրանք ստանում են համապատասխան սոցազգանձարկղից։ Հղիության և ծննդաբերության պատճառով ֆիզիկական աշխատանքով զբաղվողներն արձակուրդ ստանում են ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և այդ արձակուրդը շարունակվում և ծննդաբերությունից 8 շաբաթ հետո (ընդհանուր առմամբ 16 շաբաթ)։ Գրասենյակային և մտավոր աշխատանք ունեցող հղիկանալք արձակուրդ ստանում են ընդամենը 12 շաբաթ, այսպիսին ծննդաբերությունից 6 շաբաթ առաջ և 6 շաբաթ հետո։

Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատին իրավունք և վերապահված 12 շաբաթից ավելի յերկար տևողությամբ արձտկուրդ սահմանել վորոշ կատեգորիայի գրասենյակային և մտավոր աշխատանք ունեցող կանանց համար, բայց այն պայմանով, վոր այդ արձակուրդը համենայն դեպս չի կարող ավելի յերկարատև լինել, քան ֆիզիկական աշխատանք կատարողների համար որենքով սահմանված արձակուրդը։

Աշխատանքի կողմից հրատարակված ցուցակի համաձայն ֆիզիկական աշխատավորների չափով հղիության պատճառով արձակուրդ ստանալու իրավունք ունեն մեքենագրուհիներ, ակուշորներ, գթության քուլըր, ֆեղղիկերուհիներ, բժշկուհիներ, արտիստներ, տևականապես գիշերային աշխատանք կատարող կանալք և այլն։

Հնարավոր ե, վոր ձեռնարկություններում և  
հիմնարկություններում կնքվելիք հավաքական պար-  
մանագրերով ավելի յերկար արձակուրդ սահմանվի հղի  
կանանց, միայն թե պետք ե նկատի ունենալ ույն  
հանգամանքը, վոր սոցիալական ապահովագրության  
որդանները պարտավոր չեն աշխատավարձ վճարել  
այսպիսիններին ավելի յերկար ժամանակի համար, քան  
սահմանված ե աշխատանքային որենսդրությամբ. ավե-  
լորդ ժամանակաշրջանի համար աշխատավարձ պետք  
է վճարեն իրենք՝ հիմնարկություններն ու ձեռնարկու-  
թյունները:

Զպետք ե մոռանալ, վոր ծննդաբերության պատճա-  
ռով աշխատավոր կանանց համար սահմանված ար-  
ձակուրդի ժամանակաշրջանի մեջ չեն մտնում այն  
հերթական և լրացուցիչ արձակուրդները, վոր կին  
աշխատավորներն ունեն նույն հիմնարկության կամ  
ձեռնարկության մյուս բոլոր աշխատավորների հետ հա-  
վասար չափով:

Բժշկական գիտությունը ծննդաբերության նախոր-  
դող և հետեւող շրջաններն ընդունում ե, վորպես ինք-  
նուրույն պերյոդներ: Նախածննդական արձակուրդն  
ու հանգիստը նպատակ ունի ապահովելու հղիության  
նորմալ զարգացումը, խուսափելու համար անժամա-  
նակ ծնունդից և նրա հետ կապված ծանր հետևանք-  
ներից, ինչպես յերեխալիք, նույնպես և ծնողի կյանքի  
ու առողջության տեսակետից:

Ծննդաբերությունից հետո տրվող արձակուրդի նը-  
պատակն ե հնարավորություն տալ ծնողին յուր ա-  
ռողջությունը վերականգնելու և նորածնին սկզբնա-  
կան շրջանում անհրաժեշտ հոգտարությունը ցուց  
տալու:

Նկատի ունենալով այս տարրերն պատահները, բը-  
նավ թուլատրելի չե վոչ միայն սահմանափակել ո-  
րենքով կամ պայմանագրով սահմանված արձակուրդի  
տեղությունը, վոչ ել նվազեցնել կամ յերկարացնել  
մեկ կամ մյուս պերիոդը ի հաշիվ մյուսի:

Այն հանգամանքը, վոր յերեխան մեռած ծնի կամ  
ծննդից անմիջապես հետո մահանա, որինական հիմք  
չի տալիս որենքով կամ պայմանագրով վորոշված ար-  
ձակուրդի տեղությունը կրնատել:

Գալով վիժման դեպքերին, պետք ե ասել, վոր ո-  
րենսդրության մեջ դրա համար արտակարգ հատուկ  
պայմանով ժամ չի սահմանված. հետեաբար, կամավոր  
կամ հարկադրական վիժման դեպքում կինը արձա-  
կուրդ ե ստանում ընդհանուր կարգով, վորպես հիկ  
վանդ:

### Դ. Արձակուրդը յել նրա նօանակուրյունը

Բանվորական որվա ընթացքում տրվող ամենորև  
կարճատե հանգստի նպատակն ե հնարավորություն  
տալ աշխատավորին խնայելու յուր առողջությունը և  
կորցրած ուժերը վերականգնելու: Բնականաբար նը-  
ման կարճատե հանգիստը չի կարող լիովին վերա-  
կանգնել աշխատավորի սպառած եներգիան: Յերբ  
նույնիսկ հնարավոր լինի հանգստի ալդ կարճատե  
ժամանակն իրականում լիովին ոգտագործել, դարձալ  
մարդկային ֆիզիկական և մտավոր ուժերն աննկա-  
տելի կերպով ժամանակի ընթացքում յենթարկվում  
են ընդհանուր հոգնածության: Թեեւ ճիշտ ե այն հան-  
գամանքը, վոր յեթե աշխատավորը յերկար ժամանա-  
կի ընթացքում յերկարատե հանգստություն չստանա,

Նրա որդանիզմը կարծես թե հարմարվում ե աշխատանքի տվյալ պայմաններին, բայց այդ համակերպումը շատ թանգ գնով ե ձեռք բերվում: Ընդհանուր հոգնածությունը վոչ միայն շոշափելիորեն յուր կնիքն ե դնում աշխատանքի արտադրողականության վրա, այլ հիմնական կերպով հաղթում և աշխատավորի առողջական դրությունը, հաճախակի դարձնելով հիվանդությունը և առաջ բերելով անժամանակ անաշխատունակություն և մահ:

Աշխատավորի սպառած ուժերը վերականգնելու, նրա տոռողջական դրությունը բավարարելու մտահոգությամբ ե, վոր խորհրդակին իշխանությունը, բացի շարաթական (7 կամ 5 որը մի անդամ) միորյա հանգըստից, սահմանել ե նաև տարեկան յերկարատես հանդիսա (արձակուրդ), վոր վոչ մի դեպքում 2 շարաթից պակաս չի կարող լինել:

Տարեկան արձակուրդի տևողությունը սերառեն կապված ե վարձու աշխատավորի անձի հետ (որինտեկի համար, անչտփահասներն ավելի յերկար արձակուրդ են ստանում, քան չափահասները), աշխատանքի պայմանների հետ (վնասակար արտադրության մեջ աշխատողներն ավելի յերկար արձակուրդով են ոգտվում). արձակուրդի տևողությունը կախված ե նաև աշխատանքի վայրի հետ (սահմանագլխի վրա, մալարիկ վայրերում աշխատողները ընդհանուր առմամբ ավելի յերկար արձակուրդ են ստանում):

Համաձայն Աշխատանքի Որենսգրքի՝ 5 և կես ամիս անընդհատ աշխատող յուրաքանչյուր վարձու բանվորութառայող իրավունք ունի հերթական արձակուրդ ստանալու մի տարվա համար վոչ պակաս յերկու շա-

բաթից, անչափահասները, խիստ վնասակար ու վտանգավոր ձեռնարկություններում աշխատողները, բժշկական պերսոնալը, միջիցիալի և կալանավարերի աշխատակիցները, ինչպես նաև բոլոր այն պրոֆեսիաների և արտադրության ճյուղերում աշխատողները, վորոնց ցուցակը սահմանում և Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը —ստանում են տարեկան մեկ ամիս հերթական արձակուրդ:

Որենքով սահմանված արձակուրդի տեսողությունը մինիմումն եւ վոչ մի արգելք չկա, վոր հավաքական կամ աշխատանքային պայմանագրով յերկարածովի հերթական արձակուրդի տեսողությունը:

Չպետք ե մոռանալ սակալն, վոր վորոշ կատեգորիայի աշխատավորներ (որինակ, սեղոնաւին և ժամանակավոր աշխատավորները, դործաղուրկների կոլեկտիվի անդամները, հասարակական աշխատանքի ուղարկվածները, պրակտիկանտերն ու ստաժորները և այլն) չեն ոգտավում հերթական արձակուրդով:

Անհրաժեշտ ե ընդգծել, վոր ցանկալի և նպատակահարմար չե սովորական և հերթական արձակուրդները փոխարինել դրամական փոխհատուցումով: Հինգորյաշաբաթվա անցնող հիմնարկ-ձեռնարկություններում աշխատողներին արգելված ե փոխհատուցում տալ շաբաթական հանգստի փոխարեն: Ընդհանուր առմանը հանգիստը պետք ե ոգտագործվի նույնությամբ, վոր պեսզի հանգիստը ծառայի լուր հիմնական նպատակին, վերականգնի աշխատավորի կենսական ուժերը, նրանդանի կենսունակ ու ոգտավետ: Միայն բացառիկ դեպում, այն ել գնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի վորոշումով թուլատրվում ե արձակուրդը:

(հատկապես հերթականը) փոխարինել փոխհատուցմամբ:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքում արձակուրդ տրվում ե ամեն մի կոնկրետ դեպքում, և պատշաճ կարգով աշխատավորը ճանաչվում ե ժամանակավորապես անգործունակ:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող արձակուրդը լերկու տեսակ ե, ա) հղիության և ծննդաբերության առթիվ տրվող արձակուրդը, վորի մասին արդեն խոսված ե և բ) հիվանդության և անձին հասցված վնասի դեպքում տրվող արձակուրդն ե: Մինչդեռ առաջին դեպքում (հղիության և ծննդաբերության) արձակուրդ տրվում ե միայն բժշկա-կանտրոլային հանձնաժողովի կողմից, 2-րդ դեպքում (հիվանդության) բժշկող բժշկին (ամբուլատորիայի կամ ռայոնի) իրավունք ե վերապահված ամեն մի անգամ մինչև 5 որ և ընդհանուր առմամբ 2 շաբաթից վոչ ավելի ժամանակով տալ արձակուրդի Յերկու շաբաթից ավելի տեսղությամբ արձակուրդի անհրաժեշտության դեպքում հարցը լուծում ե դարձլալ բժշկա-կանտրոլային կոմիսիան:

Բնականաբար, թե բժիշկները և թե բժշկա-կոնտրոլային հանձնաժողովները հատուկ նախանձախնդրությամբ պետք ե մոտենան արձակուրդ տալու խնդրին և անհրաժեշտության դեպքում միայն աշխատավորին արձակուրդ տան: Այդ անհրաժեշտ ե վոչ միայն աշխատավորին արտադրությունից, խորհրդային շինարարությունից չկտրելու համար, այլ և սոցիալական ապահովագրության գանձարկղների նյութական սուղ միջոցները խնայելու համար: Անհրաժեշտ ե սա-

կալն, վոր բանվորներն ու ծառայողներն իրենց հերթին ընկերական կոնտրոլ կատարեն իրենց ընկերների վրա, վորպեսզի կանխեն սիմուլացիալի, աշխատանքի դիսցիպլինալի խախտման դեպքերը:

Ժամանակավոր անշխատունակության դեպքում աշխատավորին արձակուրդ և տրվում այնքան ժամանակ, վորքան դա անհրաժեշտ և աշխատունակությունը վերականգնելու համար:

Հիվանդության հետևանքով իրենց աշխատունակությունը ժամանակավորապես կորցնողներն իրենց տեղը (տվյալ հիմնարկ-ձեռնարկության մեջ) պահում են յերկու ամսվա ընթացքում: Այդ պայմանաժամն անցնելուց հետո, յեթե աշխատավորը չի ներկայանած առաջության, հիմնարկությունը կամ ձեռնարկությունը իրավունք ունի նրան ազատել ծառայությունից. մինչդեռ սովորական և հերթական արձակուրդի փոխհատուցումը, որենքով սահմանված դեպքում, տրվում և այն հիմարկի կամ ձեռնարկի կողմից, վորտեղ ծառայում և տվյալ աշխատավորը, ժամանակավորապես իրենց աշխատունակությունից զրկվողներն աշխատավարձ են ստանում սոցապահնագրկղի կողմից, նախքան արձակուրդն իրենց ստացած աշխատավարձի գումարի չափով: Գանձարկղի կողմից աշխատավարձի վճարումը շարունակվում է այնքան ժամանակ, վորքան դեռ տվյալ հիվանդը չի ճանաչված աշխատանքի անկար (ինվալիդ): Անկար կամ ինչպես ասված են ինվալիդ ճանաչվելուց հետո տվյալ անձնավորությունն ստանում է թոշակ:

Եւ. Աօստանեային պայմանագրի դադարումը

Աշխատանքային պայմանագիրը դադարում եւ ա) կողմերի (վարձողի և վարձվողի) համաձայնությամբ՝

ուզած ըռպելին. բ) լեթե աշխատավորը վարձված և  
ճշտորեն սահմանված ժամանակով և կամ վորոշ աշ-  
խատանք կատարելու համար, աշխատանքալին պայ-  
մանագրի ուժը դադարում ե, լերը նախապես սահման-  
ված աշխատանքի ժամանակը լրանում և կամ վորոշ-  
ված աշխատանքը կատարվում-լրացվում ե:

Վերոհիշյալ բոլոր դեպքերում վարձողը, լեթե ալլ  
բան չի սահմանված պայմանագրով, որենքով պար-  
տավոր չե վոչ դուրս լելքի (լիկվիդացիոն) հատուցում  
տալ և վոչ ել նախապես զգուշացնել պայմանագրի  
պայմանաժամի ավարտման մասին։ Աշխատանքալին  
պայմանագիրն անհրաժեշտորեն դադարում և հետեւալ  
դեպքերում, նույնիսկ անկախ կրղմերի ցանկությու-  
նից՝ ա) դատական վճռի հիման վրա, լեթե տվյալ  
բանվորը կամ ծառայողը դատավճռով դատապարտված  
և վտարման իր ունեցած պաշտոնից, լերը դատապար-  
տյալը զրկվում ե պատասխանատու աշխատանք ստանձ-  
նելու իրավունքից, իսկ նա պատասխանատու աշխա-  
տակից և հանդիսանում, կամ լերը դատավճռով, վոր-  
պես սոցիալական պաշտպանության միջոց (պատիժ),  
մեղադրյալին արգելվում ե այս կամ այն պրոֆեսիա-  
լով կամ զբաղմունքով պարապել. բ) պրոֆեկազմակեր-  
պության պահանջի հիման վրա, լերը պրոֆեկազմա-  
կերպությունը հնարավոր չի գտնում տվյալ ծառայո-  
ղին կամ բանվորին թողնել ծառայության մեջ. դ)՝  
այն դեպքում, լերը բանվորը կամ ծառայողը հրավիր-  
վում ե իսկական զինվորական ծառայության նման-  
զինակոչի դեպքում վարձողը պարտավոր և անմիջապես  
վերջնական հաշվակցություն կատարել զորակոչվողի  
հետ և նրան ազատել աշխատանքից։

Առաջին լերկու դեպքում (դատարանի և պրոֆեսազ-  
մակերպության պահանջի) լիկվիդացիոն հատուցում  
չի վճարվում արձակվողին, քանի վոր վտարումը  
տեղի չի ունենում վարձող կողմի մեղքով։ Յերկրորդ  
դեպքում վարձողը պարտավոր է զորակոչի լենթարկ-  
վողին վճարել միանվագ նպաստ, լերկու շաբաթվա-  
աշխատավարձի չափով։

Ի՞նչ դեպքերում վարձողին իրավունք վերապահվում  
հեռացնելու վարձվածին։

Վարձողը կարող է անժամանակ կնքված աշխատան-  
քային պայմանագիրը լուծել որենքով նախատեսված  
հատուկ դեպքերում միայն։ Այդ դեպքերը հետևյալներն  
են՝ ա) ձեռնարկության կամ հիմնարկության ամբող-  
ջական կամ մասնակի լիկվիդացիան կամ նրա աշխա-  
տանքների կրծատումը։ Նման դեպքերում վարձվողին  
լերկու շաբաթ առաջ պետք է նախազգուշացնել, հա-  
կառակ դեպքում վերջինս իրավունք ունի լերկու շա-  
բաթվա աշխատավածի չափով լուծարքային փոխհա-  
տուցում ստանալու։

բ) Արտադրական ընուլիթի պատճառների հետևան-  
քով՝ մի ամսից ավելի ժամանակով։

Այս դեպքում ևս վարձողը պարտավոր է կամ նա-  
խազգուշացնել և կամ լիկվիդացիոն հատուցում վճա-  
րել դարձլաւ լերկու շաբաթվա աշխատավարձի չափով։

գ) Վարձվածի անպետքությունը՝ կատարելու այն  
աշխատանքները, վորի համար նա վարձված է լեղիլ։  
Նախազգուշացման և հակառակ դեպքում լուծարքա-  
յին փոխհատուցում տալու պարտավորությունը կա-  
նակ այս դեպքում։

դ) Յերբ վարձվողը չի կատարում աշխատանքային

կամ հավաքական պայմանագրով ստանձնած լուր պարտականությունները, այլև յերբ նա խախտում է ներքին կարգ ու կանոնները, յեթե յերբեք նման խախտումը կրում է սիստեմատիկ և կամ խիստ ծանր բնույթ։ Այս դեպքում արձակումը կարող է տեղի ունենալ առանց նախազգուշացման և առանց լուծարքային հատուցման։

յե) Յերբ վարձվածը քրեյական պատժելի հանցանք է կատարում, վորը կապված է լուր աշխատանքի հետ, և վորպիսի հանցագործության փաստը դատարանի կողմից հաստատվում է և նաև՝ յեթե աշխատավորը ձերբակալվում է յերկու ամսից ավելի և կամ յեթե նա դատաքնչական իշխանության պահանջով յերկու ամսից ավելի ժամանակով հեռացվում է տվյալ պաշտոնից կամ ծառայությունից, յեթե նույնիսկ դա լինի այնպիսի գործով, վորը կապված չե լուր աշխատանքների հետ Բոլոր հիշալ դեպքերում վարձողը պարտավոր չե նախազգուշացնելու և կամ լիկվիդացիոն վճարելու։

զ) Յեթե վարձու աշխատավորը առանց հարգելի պատճառի յերեք որ անընդհատ չներկայանա աշխատանքի կամ ամսվա ընթացքում ընդհանուր առմամբ 6 որ բացակայի, վարձողին իրավունք է վերապահված նման աշխատավորին հեռացնելու, առանց նախազգուշացնելու և առանց լուծարքային հատուցում վճարելու։

ե) Յերբ աշխատավորը հիվանդության պատճառով 2 ամսից ավելի չներկայանա աշխատանքի։

ը) Առանց հարգելի պատճառի արտադրական նորմաների սիստեմատիկաբար չլրացնելը նույնպես կարող է արձակման որինական առիթ դառնալ Յեթե

նորմաների խախտումը հետեանք և վարձվածի անպետքության, ապա այդ դեպքում վարձողը պարտավոր և նրան կամ նախազգուշացնել վտարման մասին և կամ տալ նրան լուծարքային. իսկ յեթե նորմաների սիստեմատիկ խախտումը հետեանք և աշխատավորի անզգության և անփութության, այդ դեպքում նա կարող և արձակվել առանց նախազգուշացման և լիկվիդացիոն հատուցման:

թ) Այն դեպքում, յերբ վարձու աշխատավորը հրաժարվում և անցնել այլ աշխատանքի, յերբ ժամանակավորապես դոյություն չունի այն աշխատանքը, վորի համար նա վարձված և և կամ յերբ աշխատավորը հրաժարվում և այլ վայրում աշխատելու, վարձողը կարող և լուծել աշխատանքային պայմանագիրը, բայց այն պայմանով, վոր նա վճարի արձակվողին լուծարքային փոխհատուցում, վորը չի կարող փոխարինել նախազգուշացմով. յեթե աշխատավորը հրաժարվում և կատարելու այնպիսի մի աշխատանք, վորը անհրաժեշտ և իր շրջապատին ոպառնացող վտանգը կանխելու համար, նման դեպքում վարձողն իրավունք ունի հեռացնելու առանց վարձատրություն տալու պարտավորության:

ի՞նչ դեպքերում վարձու աշխատավորն իրավունք ունի հրաժարվելու աշխատանքային պայմանագրից:

Անորոշ ժամանակով աշխատանքի անցնող վարձու բանվորն ու ծառալողը ուղած ժամանակ կարող և հեռանալ աշխատանքից, միայն այն պայմանով, վոր նա այդ մասին նախազգուշացնի վարձողին: Այդ նախազգուշացումը տեղի պետք և ունենա վոչ պակաս մեկ որից այն դեպքում, յերբ տվյալ հիմնարկության կամ

ձեռնարկության մեջ աշխատավարձը վճարվում և շաբաթը մեկ անգամ և վոչ պակաս 7 որ առաջ, յեթե տշխատավարձի վճարումը տեղի լի ունենում ամսական մեկ կամ յերկու անգամ:

Յեթե վարձու աշխատավորը վարձվում և վորոշ պայմանաժամով կամ վորոշ աշխատանք կատարելու համար, նա իրավունք չունի պայմանաժամից կամ աշխատանքների ավարտումից առաջ հեռանալ, ի բաց առյալ հետևյալ դեպքերը՝

ա) Յերբ նա չի ստանում աշխատավարձ սահմանված ժամանակամիջոցում:

բ) Յերբ վարձողը չի կատարում աշխատանքային կամ հավաքական պայմանագրով իր ստանձնած կամ աշխատանքային որենսգրության նրա վրա դրված պարտավորությունները.

գ) Յերբ վարձողը կամ նրա ընտանիքի անդամները և կամ տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության ներկայացուցիչները կուպիտ վերաբերմունք են ցուցյալիս աշխատավորի հանդեպ:

դ) Յերբ աշխատանքի պայմանները վատթարանում են, այսինքն՝ յերբ աշխատանքի պայմաններն ավելի վտանգավոր կամ մնասակար են դառնում համեմատած աշխատավորի վարձման մոմենտի հետ և

է) որենքով նախատեսված այլ դեպքերում:

Բնականարար բոլոր այն դեպքերում, յերբ աշխատավորը հեռանում և իր կամքով, նա չի կարող ստանալ վորեւ նպաստ, բայց յեթե նրա հեռացումն հետևանք և վարձողի վերաբերմունքի կամ աշխատանքային պայմանների վատթարացման, վարձողը պարտավոր և հեռացող աշխատավորին ընդհանուր կարգով լուծարքային փոխհատուցում վճարելու:

Աշխատանքալին պայմանագրի լուծման հետևյալ բոլոր կանոնները տարածվում են ընդհանուր առմամբ էերկու սեռի աշխատավորների վրա։ Այս ընդհանուր կանոնները սակայն ունեն նաև իրենց բացառությունները։ Այսպես, հղի կանալք՝ համաձայն Աշխատավորները և Սոցազգողկոմատի վորոշման, կարող են հեռացվել միայն բացառիկ դեպքերում, այն ել ամեն մի տուանձին դեպքում։ Աշխատանքի տեսչի հատուկ թույլտվությամբ։ Աշխատանքի տեսուչն իր համաձայնությունը (վիզեն) կարող ե տալ միայն այն դեպքում, յերբ համոզում գոյացնի, վոր անհրաժեշտություն կա տվյալ անձի հեռացման և յերբ միանգամայն տնհնար լինի հղի կնոջ փոխարեն մի ուրիշ կնոջ հեռացնել։

Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը նկատի առնելով այն հանգամանքները, վոր ընդհանուր կերպով առած՝ ձեռնարկություններն ու հիմնարկությունները ցանկանում են ազատվել հղի աշխատավորուհիներից, քանի վոր նրանց արտադրողականությունն անխուսափելիորեն նվազում ե, Աշխատանքի տեսուչներին հատկապես հրահանգել ե ամենաուշագիր կերպով պաշտպանել հղի կանանց որինական շահերը։

Հղի կանանց համար սահմանված այս կարգը տարածվում ե նաև իրենց խնամքին մինչև մեկ տարեկան յերեխա ունեցող կանանց վրա։

Այս բոլորից յերեւում ե, վոր աշխատանքալին պայմանագիրը լուծելու որինական դեպքերում ևս կին աշխատավորները վայելում են վորոշ կարգի արտոնություններ, վորոնք կապված են մալրության և մանկության շահերի պաշտպանության խնդրի հետ։

զ. Կանանց մասսայական գործագրկությունը յել  
հասարակական աշխատանքները

Հակառակ մեր արտադրության ամենախոշոր նվազությունը կութակներին, գործազուրկները դեռևս զգալի թիվ են կազմում: Մասսայական գործազրկության մեջ խոշոր տեղ են բռնում կին աշխատավորները, շնորհիվ նախ՝ այն հանգամանքի, վոր նրանք ընդհանուր առմամբ վորակապես ցած են, աշխատանքի ստաժ չունեն, ֆիզիկական աշխատանքների նվազ ընդունակ են, ավելի շատ են յենթակա հիվանդությունների, շնորհիվ իրենց ընխոսական պայմանների և բացի այդ, հիմնարկ-ձեռնարկները սովորաբար նախընտրում են տղամարդկանց:

Վերոհիշյալ բոլոր հանգամանքներն անհրաժեշտ են դարձնում մասսայական գործազրկության դեմ կազմակերպված պայքարում հատուկ ուշադրություն դարձնել գործազուրկ կանանց վրա:

Հասարակական աշխատանքները, վոր կոչված են թեթևացնելու գործազուրկների ծանր տնտեսական դրությունը, պետք ե ընդգրկեն նաև կին աշխատավորներին: Այս ուղղությամբ դիրքեկտիվ որդանների կողմից միշտ ել յեղել են հատուկ հրահանգներ, վորոնց նպատակն ե զգալապես բարձրացնել հասարակական աշխատանքներում կին գործազուրկների տոկոսը:

Կանանց մասսայական գործազրկության դեմ հաջող պայքար մղելու համար անհրաժեշտ ե համարվում՝ այլ պրոֆեսիոնալ կազմակերպությունները և աշխատանքի պաշտպանության որդանները տնտեսական որդանների հետ միասին տնտեսական և տեխնիկական

նպատակահարմարության տեսակետից պարզեն այն հնարավորությունները, վոր կան գործազուրկ կանանց համար հատուկ աշխատանքներ կազմակերպելու համար, մանավանդ այն դեպքերում, իերբ ընդհանուր հասարսկական աշխատանքներն իրենց արտադրողական բնույթի տեսակետից ալնքան ել չեն կարող ընդդրկել կանանց լայն զանգվածները:

բ) Անհրաժեշտ ե հասարակական աշխատանքների գործուղելիս հաշվի առնել վոչ միայն գործազրկության տեսզության, այլև տվյալ գործազուրկի կարիքի աստիճանները, իսկ ալդ աստիճանը սովորաբար ավելի բարձր ե կանանց շարքերում.

գ) Հասարակական աշխատանքի գործուղված գործազուրկ կանանց հավասար արտադրողականության պայմաններում, անպայման պետք ե վարձատրել տղամարդկանց համար սահմանված չափով:

դ) Կին-բաժինների ներկայացուցիչներին անպայման մասնակից պետք ե դարձնել հասարակական աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման գործին, վորպեսզի դրանով ապահովվի կանանց որինական շհերի պաշտպանությունը:

Վերոհիշյալ հիմնական դրությունները վերաբերում են նաև արտադրական և աշխատավորական կոլեկտիվներին, վորոնց մեջ ևս անհրաժեշտ ե ընդգրկել գործազուրկ կանանց լայն շերտերին:

Ե. Կանանց աշխատանքի պատվանությունը յեվ աշխատանքի տեսուչները

Ընդհանրապես աշխատանքային ամբողջ որենսդրության կիրառման և հատկապես աշխատանքի պաշտպա-

նության վրա հսկելու պարտականությունն ընկնում  
և Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի վրա,  
հանձին աշխատանքի, տեխնիկական և սանիտարական  
ինսպեկցիաների (տեսչությունների):

Աշխատանքի տեսուչներն ընտրվում են վորոշ ժամա-  
նակով պրոֆսայուղների խորհուրդների կողմից և հաս-  
տատվում Աշխատանքի կոմատի կողմից:

Համաձայն աշխատանքային տեսչության գործող նա-  
կազին, աշխատանքի տեսուչները պարտավոր են հատ-  
կապես ուշադրություն դարձնել հետեւալ մոմենտների  
վրա.—

ա) Կանայք գիշերային աշխատանք կատարում են,  
թե վոչ, և յեթե կատարում են, պատշաճ թուլլովու-  
թյուն կա այդ մասին: Պետք է պարզել այն հարցը, թե  
ի՞նչ արգելք կա կանանց ազատելու գիշերային հեր-  
թապահությունից.

բ) Կին աշխատավորներ չեն զբաղված արդյոք ծանր,  
ակներև վնասակար և ստորերկրյա աշխատանքներում,  
չեն փոխադրում արդյոք նրանք Աշխատանքի կող-  
մից սահմանված նորմայից բարձր ծանրություններ:

գ) Գիշերային և արտաժամյա աշխատանքներում չեն  
զբաղված արդյոք հղի և ստնտու կանայք:

դ) Հակասակ իրենց ցանկության իրենց աշխատա-  
վայրից այլ տեղ չեն գործուղվում արդյոք հինգ ամսից  
ավելի հղի յեղող կին աշխատավորները:

լե) Հղիության և ծննդաբերության հետևանքով սահ-  
մանված արձակուրդը ժամանակին և լրիվ չափով տըր-  
վելում ե արդյոք:


զ) Կրծքով թիւեցնող կանանց թուլլատրվելում ե ար-  
դյոք լրացուցիչ դադար ունենալ և արդյոք այդ դա-

դարը հաշվվեմ և նրանց բանվորական որվա տևողության մեջ, թե վոչ.

ե) Տվյալ ձեռնարկության կից կամ արդյոք մսուր և իթե կա, բավարարնեմ և ալդպիսին բոլոր կարիք ունեցողներին:

Ահա այն կարևոր խնդիրները, վորոնք առանձնապես կապ ունեն կանանց իրավունքների պաշտպանության հետ և վորի համար աշխատանքի տեսուչները աչալուրջ կերպով պետք են հսկեն անխափը բոլոր հիմնարկությունների, ձեռնարկությունների (պետական, հասարակական թե մասնավոր) վրա, կանանց խախտված իրավունքները ժամանակին պաշտպանելու և, իհարկե, զանցառուներին որինական պատասխանատվության յենթարկելու, վարչական, թե դատական կարգով։

Առանց իրավունքների նման պաշտպանության, վորին պետք ե աջակցեն կանանց շրջանակում աշխատող բոլոր կազմակերպությունները, կին աշխատավորուհին լիովին չի կարող ոգտվել այն իրավահավասարությունից, վոր նրան բերել ե Հոկտեմբերյան հեղափոխությունը, չի կարող կրանքում կենսագործել այն քաղաքական, տնտեսական և քաղաքացիական իրավունքները, վոր նրան տվել ե խորհրդակին իրավակարգը։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ա.</b> Հոկտեմբերյան Հեղափոխությունը և կանանց ազատագրությունը . . . . .	3
<b>Բ.</b> Կանանց խորհրդային, պրոֆեսիոնալ և կոռպե- րատիվ գործունելությունը . . . . .	8
<b>Դ.</b> Կանանց աշխատանքի պաշտպանությունը . . . . .	15
ա. Աշխատանքային պարհակը և կանայք . . . . .	15
բ. Պրոֆեսիոնալ աշխատանքներ և կա- նանց առողջությունը . . . . .	18
գ. Հղի կանանց արտոնությունները . . . . .	21
դ. Արձակուրդը և նրա նշանակությունը . . . . .	25
լե. Աշխատանքային պայմանագրի դադա- րումը . . . . .	29
զ. Կանանց մասսայական դորձագրկու- թյունը և հասարակական աշխատանքները . . . . .	36
ե. Կանանց աշխատանքի պաշտպանու- թյունը և աշխատանքի տեսուչները . . . . .	37



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0035722

Гр. Галикян

ОХРАНА ТРУДА  
ЖЕНЩИН

A I  
1617

Госиздат ССР Армении

Эревань, 1930 г.



ԳԻՆՆ Ե 7 ԿՈՊ. (Վ. 1 1/4 մ.)